*բնակիչք երկրին՝ արուեստաւորք կերպասագործք ընչաւէտք:* 335 *Յորոց արքայն՝ Ճէնբակուր*[1]*, նստի ի քաղաքին Սիւռա[յ]*[2]*, որ է ի հարաւա[յ]ին արեւ[ել]եա[յ]*[3] *ծայրի աշխարհին, [առ* ***Անծանօթ երկրաւ]***[4]*:*

336 ***ԽԵ.***[5] *Աշխարհ Ասիո[յ] Սիւնեց[ւ]ոցն*[6] *է, առ երի Ճէնաց*[7]*:* 337 *Սահմանի նովաւ ի հիւսիս-ո[յ]*[8]*, իսկ ի յելից եւ ի հարաւո[յ] Անծանաւթ երկրաւ, իսկ ի մտից՝ Հնդկաւք եւ Կանաչուտ ծովովն, մինչեւ յԱնծանաւթ երկիր:* 338 *Յորում բնակեն ազգ[ք]*[9] *հինգ*[10] *հոմանուն գետովքն:* 339 *Եւ ընդ մէջ գետոց եւ ծովու բնակեն ազգն Ջկնակեր, որ կոչին Եթէովպացիք, թուին՝ թէ անդի եկեալք:* 340 *Իսկ առ [Ան]ծանաւթ*[11] *երկրաւ բնակեն, ասեն, մարդակերպք կիսանձունք՝ երկդիմիք, վեցձեռնիք*[12]*, փոկոտունք, վիշապոտունք*[13]*, կիսահաւք, կիսագազանք, կիսամարդք, անգլուխք, շանագլուխք եւ որ ինչ սոցին նմանք. ինձ՝ անհաւատալիք, այլոց՝ որպէս կամք իցեն*[14]*:*

341 [15]*[Ահա կատարեցան ամենայն*[16] *տիեզերք եւ պատմութիւնք*[17] *խաւսից:*

342 ***Եւ ահա կամիմ զչափ զօրա համառաւտել մղոնախաղաց ոտնաչափութեամբ՝ աւժանդակաբար ասպարիզաճէմ դիտաւորութեամբ***[18]*:*

1 **[Զ.] Վասն գիտութեան Մղոնաչափաց**[19]

2 *Ասպարէզ ճէ*[20] *քայլ է. քայլն Զ ոտն է. ոտն ԺԶ մատն է:* 3 *Մղոնն Է ասպարէզ է:* 4 *Ըստ Պարսից՝ ասպարէզն ճխԴ*[21] *քայլ է:* 5 *Մղոնն Ռ քայլ է, հրասահն՝ Գ մղոն*[22]*:*

6 *Ի Դունայ*[23] *ի Կարին՝ Մ մղոն*[24]*:* 7 *Ի Կարնա[յ] ի Փոսադուրս Հայոց եւ Յունաց՝ մղոն*[25]

1 *S* Ճենբակուր *փխ* Ճէնբակուր *(V. հմմտ. նախ. Ե. 285, 328, 330. համառօտում* Ճեմբակուր *է եւ* Ճենբակուր*)*

2 *Համառօտում՝* Սիռիայ *եւ* Սիւռիայ

3 *V* արնեա *փխ* արեւելեայ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս, օր.՝ Ե.270)*

4 *VS չիք* առ Անծանաւթ երկրաւ *(վեր.՝ ըստ համառօտի)*

5 *V* լ̄թ̄, *S* ԼԸ. *փխ* ԽԵ. *(վեր.՝ ըստ նախորդների)*

6 *V* Սիւնեցոցն *փխ* Սիւնեցւոցն *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

7 *VS* Ճենաց *փխ* Ճէնաց *(վեր.՝ ըստ Ե.285, 328, 330)*

8 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի)*

9 *VS* ազգ *փխ* ազգ[ք] *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս, օր.՝ նախ. Բ.13, Գ.56)*

10 *V* ե̄ *(համառօտի DPv-ում* եւթն *է, AE-ում՝* հինգ*)*

11 *VS* ծանաւթ *փխ* [Ան]ծանաւթ *(վեր., տե՛ս* **առ անծանօթ***. համառօտն է.* «Բայց անտի յանծանաւթ երկիրն որ ինչ պատմեն՝ անհաւատալիք են...»*)*

12 *V* զ̄ձեռնիք

13 *S* վիշապտունք *[ըստ համառօտի] փխ* վիշապոտունք *(V. Սուքրեանի ծանօթագրումն է.* «Յօր. *վիշապոտունք*»*)*

14 *V-ի բնագրի այս աւարտին յաջորդ՝ 38բ էջում հետեւում է՝* «և ք[րիստոս]ի ա[ստուծո]յ մերոյ յամ[ենայն] գոյից ա[ր]ա[ր]չ[ու]թ[եա]ն, փառք ընդ հօր իւրում և ս[ուր]բ հոգոյն յայժմ յաւ[իտեան]» *օրհնաբանութիւնը, որից յետոյ գրչագրի յաջորդ նիւթն է՝ գլխագիրը* («Յայլ պ[ա]տմ[ո]ւթ[եան]ց»*) նախորդների պէս լուսանցքում, պատուոյ նշանների մէջ ու փոքրատառերով*

15 *VS չիք* Ահա կատարեցան ... լեր ի Տէր *(84 տող) (վեր., V-ի վրիպած վերջին 2՝* «Մղոնաչափք» *եւ* «Աստղաբաշխական երկրաչափութիւն» *բաժինները, որ պահպանուել են համառօտի որոշ գրչագրերում եւ առանձին, վեր-նում ենք ըստ B-ի (ՄՄ ձեռ. 2679. «Մղոնաչափք»-ի համար = A), C-ի (ՄՄ, ձեռ. 4166), D-ի (ՄՄ, ձեռ. 1267) եւ E-ի (ՄՄ, ձեռ. 582. «Երկրաչափութեան» համար = A))*

16 *E չիք* ամենայն *(BD)*

17 *D* պատմածք *փխ* պատմութիւնք *(B)*

18 *D* գիտաւորութեամբ *փխ* դիտաւորութեամբ *(B) / Pv չիք* Եւ ահա կամիմ ... դիտաւորութեամբ *(3 տող) (ABD) / E չիք* եւ պատմութիւնք ... դիտաւորութեամբ *(4 տող) (ABD) / C չիք* Ահա կատարեցան ... դիտաւորութեամբ *(5 տող)*

19 *C* Մղոնահամարք երկրաչափութեան, *E* Մղոնահամարք այս են *փխ* Վասն գիտութեան Մղոնաչափաց *(B. ստորեւ՝ V-ում բացակայող աւարտական բաժինների տառատեսակը չենք փոխում)*

20 *B* ՃՀ *փխ* ՃԷ *(վեր.՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Ա.24. հմմտ. ուշ երկաթագիր* **Է → Հ***)*

21 *B* ՃԽԳ *փխ* ՃԽԴ *(վեր.՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Ա.23. հմմտ. բոլորագիր* **դ → գ***)*

22 *D չիք* Վասն գիտութեան ... Գ մղոն *(5 տող) (B) / CE չիք* Ասպարէզ ՃԷ ... Գ մղոն *(4 տող) (B)*

23 *B* Դունա, *C* Դւնա, *D* Դընայ, *E* Դընա *փխ* Դունայ *(վեր.)*

24 *CDE* մղոն Մ ի Կարնոյ (*C* Կարնո, *E* Քարնո) քաղաք *փխ* ի Կարին՝ Մ մղոն *(B)*

25 *B չիք* Հայոց եւ Յունաց՝ մղոն *(վեր.՝ ըստ CDE)*